

## Հայերեն գրականության մշակման և կատալոգների կազմակերպման բաժին

Հայերեն գրականության մշակման և կատալոգների կազմակերպման բաժինն զբաղվում է գրադարան մուտք գործած հայերեն գրքերի, թերթերի, ամսագրերի, շարունակվող հրատարակությունների, ատենախոսությունների, սեղմագրերի, ոչ գրքային հրատարակությունների մշակմամբ՝ արտացոլելով դրանք ավանդական (թղթային) և էլեկտրոնային համահավաք գրացուցակներում, «Հայ գիրք», «Հայ պարբերական մամուլ» էլեկտրոնային շտեմարաններում:

Բաժինը կազմված է երկու ենթաբաժնից՝

· Հայերեն գրականության մշակման ենթաբաժին

· Պարբերական մամուլի և առարկայական խորագրերի ձևավորման ենթաբաժին

Բաժինը վարում է տպագիր արտադրանքի տարբեր տեսակների թղթային այբբենական և կարգային գլխավոր (ծառայողական) և ընթերցողական գրացուցակներ, որոնցում արտացոլված է գրադարանի ամբողջ ֆոնդը: Մասնակցում է «Հայ գիրք» և «Հայ պարբերական մամուլ» լրիվ տեքստային էլեկտրոնային մատենագիտական շտեմարանների ձևավորմանը: «Հայ գիրք», «Հայ պարբերական մամուլ», էլեկտրոնային համահավաք գրացուցակ շտեմարանների համար ստեղծում է բազմալեզու հեղինակավոր գրառումների շտեմարան (անձնանունային, թեմատիկ, աշխարհագրական անունների, համընդհանուր անունների և այլն), որոնք հնարավորություն են տալիս մատենագիտական շտեմարաններում, ըստ հեղինակի կամ թեմայի որոնումներ կատարելիս, անկախ այն իրողությունից, թե մատենագիտական շտեմարանում ինչպես է մուտք արված հեղինակը կամ թեման (հայերեն, լատինատառ, կիրիլիցա, կեղծանունով) այդ մուտքի բոլոր տարբերակներով գրառումների համախմբված հայտնաբերման և արտածման: Այդ շտեմարաններից երկուսում կատարում է մատենագիտական գրառման միացում համապատասխանող գրքի թվային պատճենին՝ օգտվողին հնարավորություն տալով առանց գրադարան այցելելու և պատվիրաթերթիկ լրացնելու ընթերցել, ներբեռնել կամ տպել իրեն հետաքրքրող նյութերը: Ապահովում է վերահսկողությունը գրադարանի կառուցվածքային այն ստորաբաժանումների նկատմամբ, որոնց ֆոնդերի գրականության մշակումն ու տպագիր քարտերի առաքումն իրականացնում է:

Ընթերցողների տեղեկատվական պահանջների և բազմակողմանի հետաքրքրությունների բավարարման նպատակով կատարելագործում և խմբագրում է էլեկտրոնային համահավաք և ավանդական ընթերցողական գրացուցակները, ինչպես նաև՝ քարտարանները: